ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունվարի 2019թ. թիվ 11-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 318-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետարանում տեղի ունեցած կադրային փոփոխությունները՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի 2018թ. հոկտեմբերի 30-ի թիվ 318-Ա որոշման թիվ 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. հունվարի 15
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2019թ. հունվարի 15-ի
թիվ 11-Ա որոշման

«Հավելված 1.
ՀՀ Լոռու մարզպետի
2018թ. հոկտեմբերի 30-ի
թիվ 318-Ա որոշման

Մարզպետի, մարզպետի տեղակալների, մարզպետարանի
գլխավոր քարտուղարի, մարզպետի խորհրդականների և օգնականների միջև,
ըստ բնագավառների համակարգման, պարտականությունների բաշխում

1. Մարզպետ Ա.Ղուկասյան.

1) Կրթություն, մշակույթ և սպորտ,

2) Առողջապահություն,

3) Ներքին աուդիտ,

4) Քաղաքաշինություն, տրանսպորտ և ճանապարհաշինություն,

5) Հողաշինություն և հողօգտագործում,

6) Զորահավաքային նախապատրաստություն,

7) Տաշիրի և Ստեփանավանի տարածաշրջանների բյուջետային գործունեության համակարգում, այդ թվում՝ տեղական եկամուտներ, հարկեր:

2. Մարզպետի տեղակալ Ս.Սարուխանյան.

1) Տեղական ինքնակառավարում և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգում,

2) Գյուղատնտեսություն և բնապահպանություն,

3) Գուգարքի և Թումանյանի տարածաշրջանների բյուջետային գործունեության համակարգում, այդ թվում՝ տեղական եկամուտներ, հարկեր:

3. Մարզպետի տեղակալ Ա.Հովսեփյան.

1) Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանություն,

2) Սոցիալական ապահովություն,

3) Զարգացման ծրագրեր, զբոսաշրջություն և վերլուծություն,

4) Վանաձոր քաղաքի և Սպիտակի տարածաշրջանի բյուջետային գործունեության համակարգում, այդ թվում՝ տեղական եկամուտներ, հարկեր:

4. Մարզպետարանի գլխավոր քարտուղար.

1) Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացում,

2) Անձնակազմի կառավարում,

3) Իրավաբանական բաժին,

4) Քարտուղարություն:

5. Մարզպետի խորհրդական Լ.Ասլանյան.

1) Արտաքին կապեր,

2) Աղետի գոտու բնակարանաշինության ծրագրի համակարգում,

3) Արդյունաբերության հետ կապված հարցեր,

4) Մարզպետի այլ հանձնարարականների կատարում:

6. Մարզպետի խորհրդական Լ.Տեր-Սիմոնյան.

1) Մարզպետին կից հասարակական հիմունքներով գործող խորհուրդների աշխատանքների համակարգում,

2) Կոմունալ տնտեսություն, այդ թվում՝ ջրամատակարարում, գազամատակարարում, էլեկտրասնուցում,

3) Մարզպետի այլ հանձնարարականների կատարում:

7. Մարզպետի օգնական Գ.Մարկոսյան.

1) Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի ապահովում, մարզպետի մամլո ասուլիսների, հարցազրույցների և հանդիպումների կազմակերպում,

2) Քաղաքացիներին սոցիալական աջակցության տրամադրման աշխատանքների կազմակերպում և համակարգում,

3) Պատվիրակությունների այցերի և ընդունելությունների աշխատանքների կազմակերպում և համակարգում,

4) Վանաձորում, Սպիտակի և Ստեփանավանի տարածաշրջաններում մարզպետին ուղեկցում,

5) Մարզպետի օրակարգի կազմման աշխատանքների ապահովում,

6) Մարզպետի այլ հանձնարարականների կատարում:

8. Մարզպետի օգնական Ռ.Խանզադյան.

1) Քաղաքացիների ընդունելության կազմակերպում,

2) Գուգարքի, Թումանյանի և Տաշիրի տարածաշրջաններում մարզպետին ուղեկցում,

3) Մարզպետի այլ հանձնարարականների կատարում:»

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Invalid signature

X

ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ